1102. ՏԱՊԱՆԱՔԱՐ, օրորոցաձև, հարավային կողին թամքած ձի, սանձից բռնած պատանի. երկլարանի սազ նվագող, որի մոտ կան նաև երկփողանի սրինգ և մի այլ գործիք. երկու պարողներ՝ արանքներում հաց ու գավ. առջևներում մեծ սեղան՝ լիքն ուտելիքներով. շրջանակներին 3 տող.



ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽՕՍ| ԹԱԹԷՈՍԻՍ, ՈՐԴԻ ՏՐ ԱԻԵՏԻՍԻՆ. |ԹՎ. :ՌՃԾԱ: (1702):

1103. ՏԱՊԱՆԱՔԱՐ, օրորոցաձև, հարավային կողին զուռնան, առանց լրծկանների, երկու լուծով և ակներով, լծերի, անիվների և մաճի մոտ կանգնած մեկական մարդ, ընդամենը չորս հոգի. անիվների մոտ կանգնածը մի ձեռքով բռնել է ուրագ, մյուսով ինչ-որ գործիք. հորիկի մոտ՝ մեծ գավ և հաց. շրջանակներին և գլուխների արանքներում 4 տող.



ԱՅՍ Է ՀԱՆ|ԳԻՍՏ ՄՈՃՈՒՄԻՆ, ՈՐԴԻ ԱԽԱՆ|ԱՐԻՆ. ԹՎ. :ՌՃԾԷ: (1708):

1104. ԽԱՉՔԱՐ, կիսովին խրված գետնի մեջ. քիվին 1 տող.



ԵՍ ՄԵԼԻՔ ՍՏԵՓԱՆՍ ԿԱ[Ն]ԿՆԵ[Ց]Ի [ԱՔ] ԽԱՉՍ ՀԱԻՐ ՄԵՐ ՓԱՐՄ[Ա]ԶԻՆ[Ն]:

Ծանոթ. ՓԱՐՄԱԶ անունը՝ հավանաբար:

1105. ԽԱՉՔԱՐ, քիվին 1 տող.



ԿԱՄԱԻՆ ԱՑ. ԵՍ ՃԱՆԴ[Ո]ՒՐՊԱՆՍ ԿԱՆԿՆԵՑԻ . . . :

## ՆԵՐՔԻՆ ԴԵՏԱՇԵՆ (ՆԱԽԿԻՆՈՒՄ՝ ՆԵՐՔԻՆ ԱԴԻԱՄԱՆ, ՀՆՈՒՄ՝ ԿՈԹ)

Գեղարքունի գավառի ամենամեծ գյուղն է եղել սա ըստ Ստ. Օրբելյանի ցուցակի, 20 չափ հարկով: Հայոց թագավորության ժամանակ եղել է գավառի կենտրոնը և իշխանական նստոցը: Աղբյուրների մեջ կոչվել է գյուղաքաղաք կամ քաղաքագյուղ: Գյուղը ներկայումս տեղավորված է ձորամիջին, Իշխանտգետի ափերին, բայց հնում այն տարածված է եղել նաև գյուղի հարավի բարձրավանդակում, երկու կիլոմետրից ավելի երկարություն ունեցող թմրաշատ հարթության վրա և հասել է մինչև Վերին Գետաշենի տակը, որից բաժանվել է Իշխանագետի հոսանքի նեղ ձորով: Այդ բարձրավանդակի վրա մնում են բազմաթիվ շինությունների հիմնապատեր, որոնք հետզհետե մաքրվում և հերկվում են: Այս վայրը տեղացիներն

անվանում են Իշխանագյուղ, հարավային եզրին գտնվող հասարակ մատուռը՝ Իշխանավանք, իսկ նրա մեծ տապանաքարը՝ Իշխանի գերեզման։

Կոթ ավանը հնում կարևոր հանգույց էր Արարատյան դաշտից դեպի Արցախ և Գարդման տանող ճանապարհներին։ Դրանցից մեկը Կոտայքի վրայով հասնում էր լճին ու նրա հարավային ափերով հասնում մինչև Կոթ։ Երկու ճանապարհն էլ այստեղ էին միանում, որոնք Արարատյան դաշտից գալիս էին Վայոց ձորի վրայով։ Դրանցից մեկը, որը գլխավորն էր, Արփա գետի ու նրա վտակ Եղեգիսի ձորով բարձրանում էր ու Սելիմի լեռնանցքով իջնում Սևանի ավազանը։ Հնում այդ ճանապարհը Վերին Ղարանլուխի վրայով հասնում էր Իշխանագյուղ և Կոթ, իսկ այժմ իջնում է Մարտունի գյուղը։ Վայոց ձորից մի այլ ճանապարհ Արենի (Արփա) գյուղի մոտ մտնում էր Ջիվա գետակի հունը, այդ գյուղի մոտերքում իր մեջ առնում Վեդիի շրջանից Վայոց ձոր տանող ճանապարհը և, բարձրանալով վեր, Դիդ վանք կոչվող ավերակների մոտ (ուր կա եկեղեցու և հավանաբար կարավանատան ավերակ) հատում լեռնաշղթան և Աբդլասարի ստորոտներով ու Նորագյուղի վրայով հասնում Կոթ։ Այս վերջին ճանապարհը՝ դատելով շուրջը սփռված ավերակների և ճանապարհի հետ կապված հուշարձանների բնույթից, հավանաբար հնագույնն է։ Այդ պատճառով էլ անսպասելի չէ, որ Կոթ գյուղի հուշարձանների մեջ մեզ հաջողվեց գտնել մի որմնախաչ, որի արձանագրության մեջ ոմն Սարգիս, հավանաբար կենտրոնական իշխանության պաշտոնյա, հայտնում է, որ Գագիկ Բագրատունու օրոք, հավանաբար և կարգադրությամբ, Կոթ գյուղում շինել է երկու փնդուկ-պանդոկ-իջևան։ Անցյալ դարի վերջի նկարագրող հեղինակները գյուղի և շրջակայքի ավերակների մեջ հիշատակում են 7 եկեղեցիների ավերակներ։

Մեր ժողովածուում զետեղված արձանագրություններ ունեցող հուշարձանները կարելի է բաժանել հետևյալ խմբերի.

Ա. Կոթա ս. Աստվածածին կամ Կոթավանք: Շինված է գյուղի արևմտյան քարափի գլխի հարթության վրա. այն կառուցել է Գեղարքունիքի տեր Գրիգոր Սուփան II-ը, Վասակի և Մարիամ Բագրատունու որդին՝ IX դարի վերջին տարիներին։ Հուշարձանը շինված է այդ շրջանի Գեղարքունիքում կառուցվածների նման՝ հիմնականում կոփածո քարերով. եռաբսիդ և գմբեթավոր շենք է եղել չորս անկյուններում խորաններով, մուտքերն՝ արևմուտքից և հարավից ունեցել են պարսպափակ բակ, որը կառուցված է, ըստ արձանագրության (№1106), դեռևս եկեղեցուց առաջ։ Այդ փաստն ապացույց է, որ Սափանի կառուցումից առաջ էլ այնտեղ հուշարձան է եղել։ Բակում մնում են խուցերի և այլ շենքերի ավերակներ։ Ս. Աստվածածնի գմբեթը, պատերի վերին մասերը փլած են։ Շենքի վրա եղել է ընդարձակ շինարարական արձանագրություն, որը բարեբախտաբար մեզ է հասել Ստ. Օրբելյանի միջոցով։ Սմբատյանցը այդ արձանագրության 10 քար է հավաքել շրջապատից. այժմ դրանք էլ չկան։ Արձանագրությունը փորված է եղել պատերի վերին մասերում և գոտիաձև գրկել է մեկից ավելի պատերը՝ ըստ ժամանակի սովորության։

Բ. Գերեզմանատուն. տարածվում է ս. Աստվածածնի շուրջը, ընդարձակ տարածության վրա. այստեղ կան արձանագրված բազմաթիվ գեղաքանդակ խաչքարեր և տապանաքարեր. հնագույն թվականն է XI դարի սկիզբը (№1114)։

Գ. Հարավային գերեզմանատուն. գտնվում է գյուղի հարավ-արևմտյան եզրի քարափի գլխի հարթության վրա։ Այստեղ կան գեղաքանդակ և մեծ խաչքարեր, ինչպես և մեծ ու տափակ տապանաքարեր, առանց արձանագրության, բայց X—XI դարերի քանդակներով։ Նոր մասում ևս շատ խաչքարեր և տապանաքարեր կան, որոնք ունեն արձանագրություններ, իսկ արևմտյան եզրին կա մի կիսավեր մատուռ, որի մոտ կանգնած է Հյուսն Հովհաննեսի խաչքարը՝ 1307 թ. (№1187)։

Դ. գյուղամիջում և շրջակայքում ցրված հուշարձաններ։ Սրանք կազմում են խմբական և առանձնակի հետևյալ հուշարձանները։ I. Գյուղի արևելյան մասում, խճուղու եզրին, մի պարտեզի մեջ՝ հին գերեզմանատան մնացորդներ, որտեղ կանգնած են 3—4 շատ մեծ խաչքարեր՝ IX—X դարերի պարզ զարդերով, որոնցից միայն մեկի թիկունքին կա շատ երեսանց գրված արձանագրության մնացորդ (№1198)։ Նույն տեղում կան գետնի մեջ թաղված տափակ տապանաքարեր՝ նախորդներին ժամանակակից, ապա նաև մի քանի հատ, օրորոցա-

ձև տապանաքարեր, որոնցից մեկի վրա՝ կենցաղային տեսարան և աջից ձախ գրված խիստ եղծված արձանագրություն. վերջիններս վերաբերում են արդեն XVI—XVII դարերին։ II. Այս գերեզմանատնից դեպի հարավ, գյուղի եզրին կա մի հասարակ մատուռ, որի մեջ կանգնած է աքանչելի քանդակներով մեծ որմնափակ խաչքար, որը տեղացիների կողմից կոչվում է «Ամենափրկիչ», իր արվեստով հար և նման Վայոց ձորի, հատկապես Եղեգիս ավանի XIII դարի հուշարձաններին։ Մատուռի շուրջը կան նաև հասարակ տապանաքարեր։ III. Գյուղամիջի երկաթե կամուրջի մոտ, գետի ձախ ափին մնում են հին շենքերի և եկեղեցու մնացորդներ ու տապանաքարեր։ Այստեղ կան նաև քարե դագաղի, ցածր և երկթեք մի կափարիչ ու մի հասարակ խաչքար՝ 1222 թ. արձանագրությամբ (№1199)։ IV. Գյուղի հարավ-արևմըտյան մասում, քարափի լանջին, կանգնած է մեծ և գեղաքանդակ խաչքար՝ 1245 թ. արձանագրությամբ (№1200)։ V. Իշխանագյուղի հարավային եզրին, քարափի տակ Իշխանավանք կոչված մի հասարակ եկեղեցի կա, որի մեջ գրված մեծ գերեզմանաքարի վրա պարոն Արղութի անթվական արձանագրությունն է (№1201)։ VI. Գյուղամիջի ոչ շատ հին Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին է, որի մուտքի կողին ագուցված խաչքարի վրա եղել է արձանագրություն՝ Հովհաննես քահանայի անունով, մենք չենք գտել տեղում (№1202)։

**1106. ԿՈԹԱ Ս. ԱՍՏՎԱԾԱԾՆԻ** *շինարարական արձանագրությունը ըստ Ստ. Օրբելյանի.*

Ինձ Սուփանայ յիշատակարան հաստատեալ հոգւոյ ի Քրիստոս ի քաղաքագիւղս Կոթայ՝ ի կացուածի իմոց նախնեացն, զոր նախքան զայս պարսպափակ շրջապատեալ էին բազմածախ զանձուց յոյով աշխատութեամբ։ Ես այսր ապա իմոց նախնեացն խորհրդակցեալ կամաւքն Աստուծոյ շինեցի տուն Տեառն և յարկ Աստուծոյն Յակոբայ անուանակոչութեամբ Սրբուհւոյ Տիրամօր Աստուածածնին, վիմատաշ, կոփածոյ քարամբք. և ի սմա սենեակս ութ ի վերոյ և ի ներքոյ. և ապա ի սմին տուրք քաւարանիս կարգեցի քահանայս և զարդարեցի. զԱստուածածնին քահանայքն նախնեաց իմոց և այլ սպասաւորս բազումս ազատ արարի յարքունական ծառայութենէ և ի բեկարէ· և սահմանեցի հողս և ջուրս· և ետու միոյ քահանայի յիսուն դրամ ի տարւոջն. որ լինի հնգեցիկս· և սահմանեցի չորիցս քառասունս և սաղմոս զննդութեան կանոնն և զառաւաւտուն սաղմոսն, զի որչափ ես եմ ի մարմնի, յաղագս կենացս յաջողման լիցի, և յետ վախճանի կենացս մեղուցեալ հոգւոյ իմոյ կատարեն։ Եւ յամենայն ամի իւրաքանչիւր ոք ի քահանայիցս չորիցս քառասունս ունիցին վասն իմ։ Եւ արդ՝ եթէ ոք ձեռնարկէ յայս և յափշտակել ջանայ զիմ հոգեցատուր հողսդ և զայլ ընծայսդ ի քահանայիցդ· և կամ զքահանայ ի տուր ընկենու զոր ազատեցի ես ամենայն ուրեք, կամ ի զարմից իմոց կամ ի ժառանգաւորաց կամ յայլազգաց զկնի մեր, այնպիսոյն բարձցի անունն յերկրէ և յիշատակն, և դատապարտեալ և ամաւթալից եղիցի յահեղ հրապարակին Քրիստոսի, և մեղաց իմոց համարս տայցեն յաւուրն դատաստանի· և ժառանգեսցեն զհուրն անշէջ և զտանջանսն յաւիտենական։ Եւ եթէ քահանայքդ երբէք ստնգանիցէք և մոռացումն ունիցէք կարգեալ շարագրութեանցդ և կամ ծուլանայք յեդեալ քառասներոյդ, Տէր Աստուած դատապարտեսցէ զձեզ զաւակաւք և զարմիւք. և բաժին ձեր ընդ տիրասպան քահանայիցն լիցի։

Ծանոթ. *Այս նշանավոր արձանագրությունը գրված է եղել հավանաբար շենքի պատերի վերին մասերում, ղոտիաձև. այժմ դրա ոչ մի բեկորը տեղում չկա, ոչ պատերի վրա և ոչ էլ թափված քարերի մեջ։*

*Մ. Սմբատյանցն, իր ժամանակ, թաղված քարերի մեջ գտել է 10 հատ, որոնց վրա եղել են անտարակույս այս արձանագրության մասերը և արտագրել է դրանց վրա պահպանված հետևյալ անկապ բառերը.*

Ի Խաղախագիւղս Կոթայ. գանձուց. տուն Տեառն. Աստուածածին. շինեցի. սենեակս :Ը:. զարմից. զԱստենախանանայ. յարխունական. խառաստունս. յերկրէ. յարկն. աշխատութեան. յիշատակ. սաղմոս.

**Հրատ. Ստ. Օրբելյան, 177—178։ Ալիշան, 55—56։ Սմբատյանց, 534։ Շահխաթունյանց, Բ, 243—244։**

*1107. Ս. Ա̅ԾԱԾԻՆ, արևելյան պատի հյուսիսային մասում, խորշի մոտ, պատի ստորին մասում դրված, բայց արդեն խախտված, դեղին գույնի երեսապատման մի քարի վրա 2 տող.*

·····ԻՆԻՆՂՍԱԼ······
ՈՋԱՐՄԻՑ·······

Ծանոթ. *Բոլոր կողմերից թերի այս բեկորը հավանաբար շինարարական նախորդ մեծ արձանագրությունից է, իր ներկա տեղում ագուցված հետագա նորոգումների ժամանակ։ Այս ենթադրությանը հիմք կարող են ծառայել կողքի քարերի հետ անհարիր գույնը և մանավանդ գրչության հնագույն ձեն ու տառերի մեծությունը, որպիսին գրվում էր միայն բարձր տեղերի համար։*

*1108. Ս. Ա̅ԾԱԾԻՆ, հյուսիսային պատի տակ ընկած սալանման քարի մի բեկոր, աջ կողմից կոտրված, վրան 5 տող.*

| | |
|---|---|
| + Ն:Կ:Բ:ԵՍՅԵՎԱՍ······· | :ՆԿԲ: (1013) ԵՍ ՅԵՎԱ[ՆԷ]Ս . . \| |
| ԵՂԲԱՅՐԵՒԱՆՈԳԻ······· | ԵՂԲԱՅՐ ԵՒ . . [ԱԻԳՆՈՒ]\|- |
| ԹԵԱՆԱ̅ՅԿԱՆԿԵՑ······· | ԹԵԱՆ Ա̅Ծ. ԿԱՆԿ[Ն]ԵՑ[ԱՔ ՍԲ. Ն]- |
| ՂԱՆՍՎԱՍՆԻՄԵՂ······ | ՇԱՆՍ ՎԱՍՆ ԻՄ ՄԵՂ[ՈՒՑԵԱԼ Հ]- |
| ՈԳՈՅՍԳՐԿ | ՈԳՈՑՍ . . . . . |

Ծանոթ. *Ստորին մասում ազատ տեղ կա, բայց չի շարունակված։*

*1109. Ս. Ա̅ԾԱԾԻՆ, հյուսիս-արևելյան ավանդատան մուտքի գլխին բարավորի փոխարեն դրված հնագույն խաչքարի վերից-վար կիսված մաս, երեսով ներքև, վրան թերի 5 տող.*

| | |
|---|---|
| + ԿԱՄԵՑԱՒԸՆԿՂՄԵԼ······· | ԿԱՄԵՑՍԻ ԸՆԿՂՄԵԼ . . . |
| ՍԻՆԵՒՂԱՒՐՈՒԹԵԱՄԲ········ | . . ԵՒ ԶԱՒՐՈՒԹԵԱՄԲ [Ս.ԾԱԾ]- |
| ՆԻՍԵՒՍՐԲՈՅՆԳԵՈԳ······· | ՆԻՍ ԵՒ ՍՐԲՈՑՆ ԳԵՈՐ[ԳԱ] . . . |
| ԵՍՎԱՀԱՆԻԿԾԱՌԱ········ | ԵՍ ՎԱՀԱՆԻԿ ԾԱՌԱ[Յ Ա̅Ծ. Կ]- |
| ԱՅԳՆԵՅԻՉՍՈՒՐԲՆ······· | ԱՆԳՆԵՑԻ ԶՍՈՒՐԲ Ն[ՇԱՆՍ] . . . ; |

Ծանոթ. *Համարում ենք տեղադրված հենց շինության ժամանակ։ Խաչքարի քանդակների և գրչության ոճը IX դարի է։*

*1110. Ս. ԱԾԱԾԻՆ, հարավ-արևելյան ավանդատան մուտքի գլխին բարավորի փոխարեն դրված հնադույն խաչքար, երեսով արևելք (ավանդատան ներքը), թևերի շուրջը 7 տող.*



ՍՈՒՐԲ| Վ.ԱՐԴ֊Ա.Ն| ՆԱՀ|Ա.Տ|ԱԿ |ՔԻ:

Ծանոթ. *Այս խաչքարը ևս IX դարի է և ագուցված ներկա տեղում, շինության ժամանակ։*

*1111. Ս. ԱԾԱԾԻՆ, արևելյան պատի ստորին մասում, արտաքուստ, երեսպատման երկու քարի վրա անարվեստ տառերով 14 տող.*



ԹՎ. :ՁԻԴ: 1275 ՑԱՇԽԱՐՀ|ԱՑԿԱԼՈՒԹԵ. ԱՊ|ԱՂ.Ա. ԼԴ.ԱՅՆԻՆ ԵՒ ԽԱՐ|ՆԱԽԻՆ, ՊԱ-ՐՈՆ ՏԱՐ|ԼՍՅԱՑԻՃԻՆ, ԵՍ ՋՈՒԲԷԿ| ՉԱՑՍ ԹՈՂԻ ԴԷՄԷԹ|ԱՐԱՑ ՀԱԿՆ, ՇԴԻՈՋՆ, Զ|-ՄՇԱԿՆ, ԳՈՐԾԻՔՆ. :Ժ:| ԳՐԻՒ ՀԱՑ Ի ԳԵՂ.Ա. :Ա: ԵՋ.| :Ա: ԿՈՎ. ԻՄ ԳՎ.ՈՒԽ. ԱՅԼ Ի ԳԵ|Ղ.Ա: ՈՎ. Զ|ԱՑՍ ԽԱՓ|ԱՆԷ :ՑԺԲ: ՆԶՐՈՎ.ՅԱԾ Է:

Ծանոթ. *Վերջին չորս տողերը այլ գրչությամբ են։ Չենք հասկանում ՇԴԻՈՋՆ բառը։ ԻՄ ԳՎ.ՈՒԽ դարձվածքը նշանակում է ԻՄ ԳԼԽՈՒ, այսինքն իմ նախաձեռնությամբ կամ առանց վերադաս իշխանների հետ համաձայնեցնելու։*

Հրատ. *Սմբատյանց, 533, Լալայան, XVII 144—145, երկուսի մոտ էլ թերի և աղավաղված. վերջինիս մոտ տեղադրությունը սխալ*

Լուսանկ. 214

*1112. Ս. ԱԾԱԾԻՆ, բեմի կորության հարավային անկյունում նորոգումների ժամանակ ագուցված մի քարի երկու երեսներին, անարվեստ տառերով 8 տող.*



. . . ՈՐԴԻ ԿԱ|Ն[Գ]ՆԵՑԻ Զ]ԽԱՋՍ Ի
ՀԱ[Ն]ԳՍՏ[Ի]| ՀԱՒՐ ԻՄՈ ԳԷՈ[Ր]ԳԱՈՑ
ՑԱՂ.|ԱՒԹ[Ս ՅԻՇԵՑԷՔ]
*մյուս երեսին*
ԵՍ ՔՈՐԷ[ՊԻ]ՍԿՈՊՈՍ . . . . :

*1113. Ս. ԱԾԱԾԻՆ, բեմի կամարի վերի մասում ագուցված մի քարի վրա անավարտ դրչությամբ, 6 տող.*



Ծանոթ. *Լրիվ իմաստ չի ստացվում։*

Լուսանկ. 215

**1114.** *ԽԱՉՔԱՐ, հնագույն, ընկած է ս. Ածածնի հյուսիսային պատի տակ. ներքևի մասում 4 տող.*



ՅԱՆՍՈՒՆ ԱՅ. ԵՍ ՍԱՐԳԻ|Ս ՇԻՆԵՑԻ :Բ: ՓՆԴՈՒ|Կ, ԳԱԳԿԱ ԱՐԵՒՈ|ՑՆ ԵՒ ԻՄ ՄԵՂԱՑ...

Ծանոթ. *Արձանագրության թվականը որոշվում է մոտավորապես ԳԱԳԻԿ անվան հիշատակմամբ, որը Գագիկ I Բագրատունին է հավանաբար, 990—1020 թթ.: Ըստ երևույթին ագուցված է եղել պատի մեջ նախապես, հենց փնդակի:*

Լաստեկ. 216

**1115.** *ԽԱՉՔԱՐ, զեղաքանդակ, կանգնած է եկեղեցու արևելքում, գերեզմանատան մեջ. հյուսիսային կողին 6 տող.*

ԻԹԻ Հ
ՈՅԳԵՐ
ԳԵՐԻԿԱՆ
ՈՐԴԻՍԱ
ՐԳՍԻԷ
ՍԲ ՆՇՍ

Ի ԹԻ. ՀԱՅՈՑ| :ՈԺ: (1161) ԳԵՐ|ԳԵՐԻԿԱՆ| ՈՐԴԻ ՍԱ|ՐԳՍԻ Է|ՍԲ. ՆՇԱՆՍ

Ծանոթ. ԳԵՐԳԵՐԻԿ *անունը հավանաբար* ԳՐԻԳՈՐԻԿ *անվան տարբերակն է:*

**1116.** *ԽԱՉՔԱՐ, գտնվում է գերեզմանատան արևելյան մասում. քիվին և շրջանակներին 4 տող.*




ԵՍ ԹԱՀԻՐՍ ԿԱՆԿՆԵՑԻ ԶԽԱՉՍ| ԻՇԱՏԱԿ ԾՆՈՂԱՑ ԻՄՈՑ| ԱԻԱՆԻՆ.| ԹՎ. :ՋԼԶ: (1487):

1117. *ԽԱՉՔԱՐ, գտնվում է եկեղեցու հարավում. Թևերի շուրջը միայն թվականը, 2 տող.*




ԹՎ. ։ՋԼԶ։ (1487)։

1118. *ԽԱՉՔԱՐ, փոքր, գտնվում է գերեզմանատան արևելյան մասում, քիվի տակ և ճակատի մանր խաչերի արանքներում 3 տող.*




ՍԲ. ԽԱՉՍ Բ˪Ա˩ՐԷԽ˪ԱՒ˩Ս ԱՆԴ˪Ո˩Կ| ՔԱՀԱ˪ՆԱ˩ՅԻՍ. ԹՎ. ։ՋԾԷ։ (1508)։

1119. *ԽԱՉՔԱՐ, գտնվում է գերեզմանատան արևելյան մասում. քիվին և թևերի շուրջը 3 տող.*




ԱԾ. ՈՂՈՐՄԻ ԳՈՒԼՇԱՐԻՆ։|
ԹՎ.| ։ՋԿԴ։ (1515)։

1120. *ԽԱՉՔԱՐԵՐ, երկու հատ. գտնվում են եկեղեցու հյուսիսում՝ իրար կից. հյուսիսայինի քիվին և ներքևում 3 տող.*



ԵՍ ՄԱԹԷՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԿԱՆԿՆԵՑԻ ՉԽԱՉՍ| ՀՈԳՒՈՅ ՓՐԿՈՒԹԻ ՀԱՒՐՆ ԻՄ ՋՀԱՆՇԻՆ.| ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՍ. ԹՎ. ՋԿԶ։ (1517)։

*Հրատ. Սմբատյանց, 535. Լալայան, XVIII, 145.*
**Լուսանկ. 217**

1121. *ՀԱՐԱՎԱՅԻՆԻ ԽՈՐԱՆԻ ՎԵՐԻՆ ԱՆԿՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԵՎ ՆԵՐՔԵՎՈՒՄ, 5 տող.*



ԹՎ. ։ՋՀԳ։ (1524). ԵՍ ՄԱԹԷՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԵՒ ԵՂԲԱՐ ԻՄ ԵՂԻՇԱՑ| ԿԱՆ˪ԳՆԵ˩ՑԱՔ ԶԽԱՉՍ ԲԱՐԵԽԱՒ˪Ս˩ ՄԵԶ ԱՌ ՔՍ. ԵՒ ՄԱՒՐ ԻՄՈՅ ԿԱՏԱՐԻՆ. ԱՂԱՒԹ˪Ս˩ ՅԻՇ˪ԵՑԷՔ˩։

**Լուսանկ. 218**

*1122. ԽԱՉՔԱՐ, գեղաքանդակ, կանգնած է գերեզմանատան արևելյան մասում. բիվին և ներքևի գնդի շուրջը 2 տող.*

ՄԽՉԲԱԷԽՕՍԷ ՂԱԶԱԻՆԹ ՉՀԷ




ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽՕՍ Է ՂԱԶԱՐԻՆ.
Թվ. ։ՋՀԷ։ (1528)։ Թվ. ։ՋՀԷ։

Ծանոթ. *Թվականը գրված է երկու անգամ. խաչքարի ստորին մասում եղել է մեկ տող ևս, սակայն այժմ բոլորովին եղծված է։*

*1123. ԽԱՉՔԱՐԵՐ, չորս հատ, մեծ և գեղաքանդակ, կանգնած են մի շարքի, գերեզմանատան կենտրոնական մասում.*
*Ա. ՔԻՎԻՆ ԵՒ ԱՋ ՇՐՋԱՆԱԿԻ ԱՏՈՐԻՆ ՄԱՍՈՒՄ 2 տող.*

ԵՍԲԱՍԵՂՍԿԱՆԵՑԻԽԶՍՓՐԿՈԹՀՈԳՈՅՄ

ԹՃԶ

ԵՍ ԲԱՐՍԵՂՍ ԿԱՆԿՆԵՑԻ Խ[Ա]Չ[Ս] ՓՐԿՈ[Ւ]Թ[Ի] ՀՈԳՈՅ ԻՄ. Թվ. ։ՋՁ։ (1531)։

*1124. Բ. ՔԻՎԻՆ 1 տող.*

ԵՍԲԱՍԵՂՍԿԱՆԿԵՑԻՋԽԶԱՄՈՍԻՆԻՄՈՅ

ԵՍ ԲԱՐՍԵՂՍ ԿԱՆԿՆԵՑԻ ԶԽ[Ա]Չ[Ս] ԱՄՈՒՍԻՆ ԻՄՈՅ.

Լալայեն. 219.

*1125. Գ. ՔԻՎԻՆ ԵՎ ԹԵՎԵՐԻ ՇՈՒՐՋԸ 2 տող.*

ՍԲԽԶՍԲԱՍԵՂՍԼԵԹՆ ԹՋՉԷ
ԹՉ | ՁԵ

ՍԲ ԽԱՉՍ ԲԱՐ[Ս]ԵՂԱԻ[Ս] ԵՂԻՍԱԲԵԹԻՆ. Թվ. ։ՋՁԷ։ (1538)։
Թվ. ։ՋՁԵ։ (1536)։

Ծանոթ՝ *Երկու թվական, առաջինը մահվան և երկրորդը խաչքարի կանգնեցման, հավանաբար։*

Լալայեն. 220

*1126. Գ. ՔԻՎԻՆ 1 տող.*

ԵՍԽԶԱՅՈՐԿՆԿԽԶԵՂԲԱՐՂՈԿՍԱՒ

ԵՍ Խ[Ա]ՉԱՏՈՒՐ Կ[Ա]ՆԿՆ[Ե]ՑԻ Խ[Ա]Չ[Ս] ԵՂԲԱՑՐ ՂՈՒԿԱՍԻՆ.

Ծանոթ. *Տողավերջում պակասավոր բառ էլ կա, սակայն ուրիշ տեղ շարունակված չէ։ Այս չորս հուշարձանները վերաբերում են մի ընտանիքի։*

*1127. ԽԱՉՔԱՐԵՐ, երեք հատ, կանգնած են գերեզմանատան կենտրոնում, իրար կից.*

*Ա. ՔԻՎԻՆ ԵՎ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԻ ՍՏՈՐԻՆ ՄԱՍՈՒՄ 2 տող.*

ԵՍՅԿԲՔՀԿԱԿԵՑԻՋԽՂՍՄՌԻՍԻՆՄՂԿ

ՍԻՆ. ԹՎ ՋՀԸ

ԵՍ ՅԱԿՈԲ ՔԱՀԱՆԱՅ ԿԱՆԿ-
ՆԵՑԻ ՉԽԱՉՍ ԱՄՌԻՍԻՆ ՍՐՊԷԻԿ
ՍԻՆ. ԹՎ. :ՋՀԸ: (1529):

*Հրատ. Սմբատյանց, 532, Լալայան, XVIII, 145։*

*1128. Բ. ՔԻՎԻՆ 1 տող.*

ԵՍՅԱԿՈԲՔՀԿՆԿԵՑԻԽՉՍՓԿՀՊԳ

ԵՍ ՅԱԿՈԲ ՔԱՀԱՆԱՅ ԿԱՆԿՆԵՑԻ
ԽԱՉՍ ՓՐԿՈՒԹԻ. ՀՈՑԳՈՅ:

*1129. Գ. ՔԻՎԻՆ ԵՎ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿԻ ՍՏՈՐԻՆ ՄԱՍՈՒՄ 3 տող.*

ԵՍՈՍ-ԿՈՆՏՔՀ·ԿՆԿԵՑԻԽՉՍՈՒԼՈՒ

ԹՎ ՋՁԷ

ԱԹՈՒՆԻՆ

ԵՍ ՈՍԿԱՆ · · · · ՔԱՀԱՆԱՅ
ԿԱՆԿՆԵՑԻ ԽԱՉՍ ՍՈՒԼՈ
ԽԱԹՈՒՆԻՆ. ԹՎ. :ՋՁԷ: (1538):

Ծանոթ. *Այս երեք խաչքարերի դիմաց կան տապանաքարեր, որոնք պատկանում են մի գերդաստանի։*

*1130. ԽԱՉՔԱՐԵՐ, չորս հատ, կանգնած են ս. Ածածին եկեղեցու հարավային կողմում, իրար կից.*

*Ա. ՔԻՎԻՆ ԵՎ ԽՈՐԱՆԻ ՎԵՐԻՆ ԱՆԿՅՈՒՆՆԵՐՈՒՄ 2 տող.*

ԵՍՄԱՆՎԷԼՍԿՆԿՑԻԽՉԲՍԵՂՔՀՆ

ՉԿՂՄ ԹՎ ՋՂԱ ԱԿՈԲԻ

ԵՍ ՄԱՆՎԵԼՍ ԿԱՆԿՆԵՑԻ ԽԱՉՍ ԲԱՐՍԵՂ ՔԱՀԱՆԱՅԻՆ.
ՉԿԱՋՄՈՂ ԱԿՈԲԻ. ԹՎ. :ՋՂԱ: (1542):

Հրատ. *Սմբատյանց, 531, Լալայան,* XVIII, *145 (երկուսի մոտ էլ ԲԱՐՍԵՂ ՔԱՀԱՆԱՆ դարձել է ԵՂԿԱՆ, այդ սխալ ձևով էլ տվել է Աճառյանն իր բառարանում)։*

**Լուսանկ. 221**

*1131. Բ. ՔԻՎԻՆ 1 տող.*

ԵՍԸՍՏՓՆՂՍԸՄՍԱԼՍՆՍԿՆԵՑՄԲ

ԵՍ ԸՍՏԵՓԱՆ, ՂԱՍՈՒՄՍ, ԱԼՍԱՆՍ, ԿԱՆԿՆԵՑԱՔ ՄԲ ԽԱՉՍ:

*1132. Գ. ՔԻՎԻՆ ՄԵԾ ՄԱՍԱՄԲ ԵՂԾՎԱԾ, 1 տող.*

ԵՍԸՍՏՓԱՆ······ ԵՍ ԸՈՍՏԵՓԱՆ · · · · ·

*1133. Գ. ՔԻՎԻՆ 1 տող.*



ԵՍ ԲԱՇԱՐ[Ա]Թ ԱՂԷՍ, ՈՐԴԻ ԻՄ ՍՏԵՓԱՆՈՍ, ԿԱՆԳՆԵՑԱՔ
ԽԱՉ(Ա)Ս ԱՍՈՒԿԱՆԻՆ.

Ծանոթ. *Այս չորս խաչքարերն էլ շինված են Ակոբ կազմողի (նկարողի) ձեռքով և մեծ արվեստով։ Պատկանում են մի գերդաստանի։*

**Լուսանկ. 222**

*1134. ԽԱՉՔԱՐԵՐ, երկու հատ, մեծ և գեղաքանդակ, կանգնած են ս. Ածածնի հարավային կողմում (առաջին շարք)*
*Ս. ՔԻՎԻՆ ԵՎ ԽՈՐԱՆԻ ՎԵՐԻՆ ԿՈՂՄԵՐՈՒՄ, 3 տող.*






ԿԱՄԱՒՆ ԱՅ ԵՍ ԳՐԳ[Ո]ՐՍ, ԱՅՏՍ ԿԱՆԿՆԵՑԻՆՔ ԽԱՉՍ ՀԱՐՆ.|
ԱԿՈԲ ՆԿԱՐՈ|Ղ։

Ծանոթ. *ԱՅՏՍ անծանոթ անունը թերևս Աստուածատուր անվան սղումն է։*

*Հրատ. Սմբատյանց, 531։ Լալայան XVIII, 145։*

**Լուսանկ. 223**

*1135. Բ. ՔԻՎԻՆ 1 տող.*



ԵՍ ԳՐԳ[ՈՐ]Ս, ԵՂԲԱՐՔՍ Կ[Ա]ՆԿ[ՆԵ]ՑԻ[Ն]Ք Խ[Ա]ՋՍ ԱՐՋՈՒԲԱՆ[Ի]Ն|

Ծանոթ. *Արձանագրությունների թվականը որոշվում է ԱԿՈԲ կազմողի հիշատակումով, որը նախորդ խումբը շինել էր 1542 թ.։*

**Լուսանկ. 224.**

*1136. ԽԱՉՔԱՐԵՐ, երկու հատ, գեղաքանդակ, կանգնած են ս. Ածածնի արևելյան պատի մոտ, իրար կից.*
*Ա. ՀՑՈՒՍԻՍԱՑԻՆԻ ՔԻՎԻՆ 1 տող.*



ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱ[Ւ]Ս[Ս] ՍԻՐԱՄԱՐԳ[Ի]Ն. ԹՎ. ։ՋՂԲ։ (1543)։

**Լուսանկ. 225**

*1137. Բ. ՀԱՐԱՎԱՑԻՆԻ ՔԻՎԻՆ.*



Խ[Ա]ՉՍ ԲԱՐԷԽԱԻ[Ս] ԱՍՈՒԿԱՆ.

Ծանոթ. *Պատկանում են նույն գերդաստանին։*

Լուսանկ. 226.

*1138. ԽԱՉՔԱՐ, կանգնած է ս. ածածնի արևելյան պատի մոտ. քիվին և թևերի արանքում 3 տող.*



ԱՌ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱԻՍ ԳՐԻԳՈՐ[Ի]Ն.|

ԹՎ.| :ՋՂԹ: (1550):

*1139. ՏԱՊԱՆԱՔԱՐԵՐ, երկու հատ, օրորոցաձև, գտնվում են ս. ածածնի հյուսիսային պատի մոտ։*

*Ա. ԱՐԵՎԵԼՑԱՆ ՃԱԿԱՏԻՆ 7 տող.*



ԱՅՍ Է ՀԱՆ|ԳԻՍՏ ՍԱՐ|ԳԻՍԻՆ, ՈՐ Է| ՈՐԴԻ ՈՍԿ|ԱՆԻՆ. ԹԻ :Ռ: (1551):

*1140. Բ. ԱՐԵՎԵԼՑԱՆ ՃԱԿԱՏԻՆ 4 տող.*



ԱՅՍ Է Հ|ԱՆԳԻՍՏ| ՍԱՐՈՒ|ԽԱՆԻՆ։

Ծանոթ. *Իրար կից են, պատկանում են նույն գերդաստանին։*

Լուսանկ. 227

*1141. ԽԱՉՔԱՐԵՐ, երկու հատ, կանգնած են ս. ածածնի հարավային կողմում.*

*Ա. ՀՑՈՒՍԻՍԱՑԻՆԻ ՔԻՎԻՆ 1 տող.*



ԵՍ ՄԻՐԻՃԱՆՍ ԿԱՆԿՆԵՑԻ ՉԽԱՉՍ ՓՐԿՈՒԹԵ ՀՈԳՈՑ ՈՀԱՆԻՆ

[ԹՎ]. :ՌԳԱ: (1555):

Ծանոթ. *Բնագրում թվականի միավորները գրված են երկու տառով՝ Գ, Ա. մենք նշանակում ենք դրանց գումարը։*

Լուսանկ. 228



18—619

*1142. Բ. ՀԱՐԱՎԱՑԻՆԻ ՔԻՎԻՆ 1 տող.*



ԵՍ ԱՌԱՔԵԼՍ ԿԱՆԿՆԵՑԻ ԽԱՉՍ
ՀԱԻՐ ԻՄ ՍԻՄՈՆԻՆ։

*1143. ՏԱՊԱՆԱՔԱՐ, փոքր, օրորոցաձև, հարավային կողին թամքած ձի, երկլարանի սաղ նվագող, գաթա, դավեր և կերակրով լիքը ափսե. ճակատին 5 տող.*



ԱՅՍ Է ՀԱՆ|ԳԻՍՏ ՍԱՐ|ԳԻՍԻՆ, ՈՐ Է
ՈՐԴԻ ՈՍԿ|ԱՆԻՆ. Թ̅Վ. ։ՌԷ։ (1558)։

Լուսանկ. 229

*1144. ԽԱՉՔԱՐԵՐ, երկու հատ, գտնվում են ս. ածածնի արևելյան պատի մոտ, իրար կից.*

*Ա. ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆԻ ՔԻՎԻՆ, ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ՋԱՐԴՎԱԾ, 1 տող.*



ՍԲ. ԽԱՉ[Ս] ԲԱՐԷԽԱՎ[Ս] ՄԱ[Ն]Վ[Լ]ԻՆ.
Թ̅Վ. ։ՌԻԴ։ (1575)։

Լուսանկ. 230.

*1145. Բ. ՀԱՐԱՎԱՑԻՆԻ ՔԻՎԻՆ.*



Ս̅Բ Խ[Ա]Չ[Ս] ԲԱՐ[Է]ԽԱԻՍ]
ՄԷԼԻՔ ԽԱԹՈԻՆ[Ի]Ն]։

Լուսանկ. 231

*1146. ԽԱՉՔԱՐԵՐ, երկու հատ, կանգնած են ս. ածածնի հարավային մուտքի դիմաց, երրորդ շարքում, իրար կից.*

*Ա. ԵՐԿՈՒ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԻՆ, խառն տեղադրությամբ և անարվեստ դրչությամբ.*



ԵՍ ՎԷԼԻՍ ԿԱՆ[Կ]Ն]ԵՑՈՒՑԻ Խ[Ա]Չ[Ս]՝
ԿՈԹԱՑ ՏԱՆՈՒՏԷՐՍ ՈՒ ԵՂԲԱ[Ի]Ր ԻՄ.
ՐՋԽԱՉՍ ԾՆՈՂԱՑ ՄԵՐՈՑ ԲԱՂԱԹՈՒՐԻՆ
ԵՒ ՄԱԻՐ ԻՄՈՑ ՋԱՎՐԻՆ ԵՒ ԵՂԲԱԻ[Ր]
ԻՄՈՑ ԷՐ[Է]ՑԻՆ. Թ̅Վ. ։ՋԾԻՉ։ (1577)։

**Ծանոթ.** *Թվականը պիտի կարդալ ։ՌԻՉ։ արձանագրություններում մեջ անսովոր չէ երկու հարյուրավորներ իրար կողքի դնելը. Նման դեպքերում պիտի դրանք գումարել։ Բայց հնարավոր է նաև վերծանել ։Ջ։ հարյուր և ։ԻՉ։=926+551 =1477։*

Լուսանկ. 232.

**1147.** *Բ. ԲԻՎԻՆ 1 տող.*



ԵՍ ՈՎ{Ա}ՍԱԲՍ ԿԱՆԿՆԵՑԻ
Խ{Ա}ՉՍ Ս{Ա}Լ{Ա}ՀԴԱՏԻՆ.

Լուսանկ. 233

**1148.** *ՏԱՊԱՆԱՔԱՐ, փոքր, օրորոցաձև, հյուսիսային երեսին քարայծ, թամքած ձի, թաղազարդ մարդ, որը մի ձեռքով բռնել է ձիու սանձը և մյուսով՝ դավ, ապա մի կին՝ ձեռքերը խաչած կրծքին, նաև բլիթներ ու դավ. սարքին մասում 4 տող.*

ԱՅՍԷՀԱՆ-
ԳԻՍՄԻՐ
ԱՆՂԻՆ
Թ̄ՎՌԼԱ

ԱՅՍ Է ՀԱՆ|ԳԻՍՏ ՄԻՐ|ԱՆՂԻՆ|.
ԹՎ. :ՌԼԱ: (1582):

**1149.** *ԽԱՉՔԱՐԵՐ, երկու հատ, կանգնած են ս. ածածնի հյուսիսային պատի մոտ, իրար կից.*

*Ա. ՇՐՋԱՆԱԿՆԵՐԻ ՍՏՈՐԻՆ ՄԱՍՈՒՄ ԵՎ ՏԱԿԻՆ, 3 տող.*



ԹՎ. :{Ռ}ԾԶ: (1607) ԵՄԷՍ Կ{Ա}{Ն}Կ{Ն}ԵՑԻ ՓԻԿՈՒԹԵ Հ{Ո}Գ{Ո}Ց| ՍԱՓԻՆ:

Ծանոթ. *Թվականի մեջ բաց է թողնված հազարավորը, որն ավելացնում ենք։*

Հրատ. Սմբատյանց, 532։
Լուսանկ. 234

**1150.** *Բ. ՔԻՎԻՆ 2 տող.*



ԵՍ ԹԱՐԳԻԱԹ ԿԱ{Ն}ԿՆԵՑԻ{} ՍՐԲ ԽԱՉ{Ս}{} ՀԱՒՐՆ ԻՄ ՊԱՐՍ{Ա}ԹԻՆ{}:

Լուսանկ. 235

**1151.** *ԽԱՉՔԱՐԻ պատվանդանի բեկոր, դրված գերեզմանի վրա, գտնվում է գերեզմանատան կենտրոնում, մնացորդները 6 տող.*

···ԱՆՆԷՍԻՒ
···ԻԱՅԱՐՐԱՍ
···ՈՅՆՌՔԵՐ
···ԷՔԽԱՉԻՍ
···ՉԳՐԻՍԵՒԳ
··· Ե··ԱՐՄ

. . . . . ՅՈՎ{Ա}ՆՆԻՍԻՒ
. . . . . . . . . . . . . .
ՈՐԴ{Ւ}ՈՑՆ ՈՐՔ ԵՐ-
ԿՐՊԱԳ{Ի}ԷՔ ԽԱՉԻՍ
. . ԳՐԻՍ ԵՒ . . .
. . . . . . .

Ծանոթ. *Գրչության ոճը հին է, առնվազն XIII դար։*

*1152. ԽԱՉՔԱՐԵՐ, երեք հատ, կանգնած են ս. ածածնի հարավում (3-րդ շարք).*

*Ա. ՔԻՎԻՆ 1 տող.*

ԷՍՄՐԱԱԷՍԿԱՉԻՍԲԻՉԲՐԽՍՃԳ

ԵՍ ՏՐ ԱԻԱՆԷՍ ԿԱՆԳՆԵՑԻ ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱԻՍ ԹՎ. ՌՃԳ: (1654):

*Ծանոթ. Թվականի մեջ «Ի» ավելացնում ենք, նկատի ունենալով քանդակների ոճը։*

*1153. Բ. ՔԻՎԻՆ 1 տող.*

ԵՍԱԱԻԱՅԼՔՀՍԿԱԵՑԻԽՉԲՄԽ

ԵՍ ԱԻԱՆԷՍ ԵՎ ԱՑԼ ՔԱՀԱՆԱՑՔՍ ԿԱՆԳՆԵՑԻ ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱԻՍ։

*1154. Գ. ՔԻՎԻՆ 1 տող.*

··ԲԽՉՍԲՄԽԱՈՍՏԱՆԴՔՀ

ՍԲ ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱԻՍ ԿՈՍՏԱՆԴ ՔԱՀԱՆԱՑԻՆ։

*1155. ՏԱՊԱՆԱՔԱՐ, մեծ, օրորոցաձև, գտնվում է գերեզմանատան արևելյան մասում. հարավային կողին երկու ձիավոր իրար դիմաց, արանքում դավլ ձեռքին մարդ. վերևում քարայծ և եղջերու, ներքևում հացի սեղան. շրջանակներին 3 տող.*

ԱՅՍԷՀԱՆԳԻՍՏ

ՆԻԿԻՂՈՍԻՆՈՐԴԻՊԱՂՏԱՍ

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՆԻԿՈՂՈՍԻՆ, ՈՐԴԻ ՊԱՂՏԱՍԱՐԻՆ. ԹՎ. ՌՃԿ: (1711):

*1156. ՏԱՊԱՆԱՔԱՐ, մեծ, օրորոցաձև, հարավային կողին որսի և ուրախության տեսարան. վերևում չորսլարանի քյամանչա իր աղեղով, եղջերու և քարայծ, սրանցից ներքև երկու ձիավոր, մեկի ձեռքին սազ, մյուսին կեռ դաշույն, ապա հացի սեղան՝ շուրջը երեք մարդ, երկուսը նվագող, երրորդը պարող. նվագում են սազ և քանոն. հյուսիսային կողին խորաններ ու խաչեր. շրջանակներին 2 տող.*

ՍԲԽԱՉՍԲԱՐԷԽԱԻՍ

ՊԱՐՈՆՊԱՊԻՆՈՐԴԻՄԻՐՉԻՆԹՎՌՃԿԳ

ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱԻՍ ՊԱՐՈՆ ՊԱՊԻՆ, ՈՐԴԻ ՄԻՐՉԻՆ. ԹՎ. ՌՃԿԳ:

1157. *ԽԱՉՔԱՐ, կանգնած է գերեզմանատան կենտրոնում, քիվին 2 տող.*

ԵՍԱՍՄԱՆԿԱՆԿՆԵՑԻԽԱՉՍՓՐԿՈՒԹԿՈՂԱԿՑԻՆԻՄՈԴՈՒԼ|ՄԵԼԻՔԻՆ

ԵՍ ԱՍՄԱՆ . . . ԿԱՆԿՆԵՑԻ ԽԱՉՍ ՓՐԿՈՒԹ. ԿՈՂ,ԱԿ,ՑԻՆ ԻՄՈ
ԴՈՒԼ|ՄԵԼԻՔԻՆ:

1158. *ԽԱՉՔԱՐ, նախորդի մոտ, քիվին 1 տող.*

ԵԱՄԱՆՍԿԱՆԵՑՓՐԿՈՒԹՀՈԳԻՄ

ԵԱՄԱՆՍ ԿԱՆ,ԿՆ,ԵՑԻ ՓՐԿՈՒԹ.
Հ,Ո,Գ,Ո, ԻՄ,ՈՑ,:

Ծանոթ. *Թերևս նույն ԱՍՄԱՆ անունն է, գրչի կողմից սխալ գրված։*

1159. *ԽԱՉՔԱՐ, նախորդի մոտ, քիվին 1 տող.*

ՏՐՈՒՍԿԱՆԿԵՑԻԽԱՉՍԱՄՈՒՍԻՆԻՄԱՍՈՒՆԱ

ՏԻՐՈՒՏՍ ԿԱՆԿ,Ն,ԵՑԻ Խ,Ա,ՉՍ
ԱՄՈՒՍ,Ի,Ն ԻՄ ԱՍՈՒՆԱ:

1160. *ԽԱՉՔԱՐ, կանգնած է գերեզմանատան հյուսիսային մասում, քիվին և թևերի արանքներում 3 տող.*

+ՍԲԽԱՉՍԲԱՐԷԽԱՍԽՈՒՊՆԱՉԻՆ




ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱՒՍ ԽՈՒՊՆԱ-
ՉԻՆ|: ՍԲ. ՆՇ,ԱՆՍ,|
Շ,Ա,ՀԲ,Է,Կ,ԻՆ,:

Ծանոթ. *Թևերի արանքում մանրատառ է, թերևս հետո ավելացված։*

Լալայեան, 236

1161. *ԽԱՉՔԱՐ, մեծ, գերեզմանատան հյուսիսային մասում, քիվին 1 տող.*

ՍԲԽԱՉՊԷԿԻՃԱՆԻՆԵՒԻՐՈՐԴՈՑՆ

ՍԲ. ԽԱՉ ՊԷԿԻՃԱՆԻՆ ԵՒ ԻՐ ՈՐԴՈՑՆ:

1162. *ԽԱՉՔԱՐ. նախորդի մոտ, քիվին, ճակատին և հարավային կողին 2 տող.*

ՍԲԽԱՉՍԲԱՐԷԽԱՍ
ՏԻՐԱՑ ՊՈՂՈՍԻՆ ՈՐԴԻԾԱՏ | ՈՒՐԻՆ

ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱ,Ւ,Ս| Տ,Ի,ՐԱ
Ց,ՈՒ, ՊՈՂՈՍԻՆ, ՈՐԴԻ ԾԱՏ|ՈՒ-
ՐԻՆ:

1163. *ԽԱՉՔԱՐ, կանգնած է գերեզմանատան կենտրոնական մասում, քիվին 1 տող.*

ՍԲԽԱՉՍԽՈՒՊՆԻԿԱՐԻՆԷ

ՍԲ. ԽԱՉՍ ԽՈՒՊՆԻԿԱՐԻՆ Է:

1164. *ԽԱՉՔԱՐ, նախորդի մոտ. քիվին 1 տող.*

ԽԱՉՍՄԷԼԻՔԽԱԹՈՒՆԻՆԷ

Խ,Ա,ՉՍ ՄԷԼԻՔ ԽԱԹՈՒՆԻՆ Է:

1165. *ԽԱՉՔԱՐԵՐ, երկու հատ, գտնվում են գերեզմանատան հյուսիսային մասում.*
*Ա. ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆԻ ՔԻՎԻՆ, 1 տող.*



ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱՒՍ ՄԱՐԿՈՍԻՆ։

Լուսանկ. 237.

1166. *Բ. ՀԱՐԱՎԱՅԻՆԻ ՔԻՎԻՆ 1 տող.*



ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱՒՍ ՈՒԼՈՒԽԱԹՈՒՆԻՆ։

Լուսանկ. 238

1167. *ԽԱՉՔԱՐ, մեծ, կանգնած է ս. ածածնի հարավում, քիվին 1 տող.*



ԵՍ ՍԱԹԼՄԻՇ, ՑԱՐԻՍ, ԿԱՆԳՆԵՑԱՔ ԽԱՉՍ ՀՕՐ ՄԵՐ ՄԱՐԳԱՐԻՆ։

Լուսանկ. 239

1168. *ԽԱՉՔԱՐ, կանգնած է ս. ածածնի հարավում. քիվին և հարավային կողին 2 տող.*



ԵՍ ԱԿՈԲՍ ԿԱՆԿՆԵՑԻ ԽԱՉՍ ՀԱՒՐՆ ԻՄ ԽՈՍՏ|ՐՈՎԻՆ| ՄԱՐԻԱՄԻՆ։

1169. *ԽԱՉՔԱՐԵՐ, երեք հատ, կիսովին խրված հողի մեջ, կանգնած են ս. ածածնի արևելքում, իրար կից.*
*Ա. ՔԻՎԻՆ 1 տող.*



ԵՍ ՍԿՐՏԻՉՍ ԿԱՆԿՆԵՑԻ ԽԱՉՍ ՀՕՐ ԻՄ ԴԱՆԷԼԻՆ։

1170. *Բ. ՏԱԿԻ ՄԱՍՈՒՄ, 2 տող.*



ՍԾ. ՈՂՈՐՄԻ ՈՐՏ|ՈՒ ԲՈՒՂԻՆ . . . .

1171. *ՏԱՊԱՆԱՔԱՐ, նախորդ խաչքարի դիմացը, երեսին 14 տող.*



ԱՅՍ Է Հ|ԱՆԳԻՍ|Տ ՈՐՏ|ՈՒ ՊՈ|ԻՂԻՆ| ԷՐԷՐՆԵՑԻ. :Է: Փ|ԵՐԹ Գ|ԵՂԻ Տ|ԷՐ, Ի Խ|ԱՐԻՊ|ՈՒԹ|ԵՆ ՄԵՌԱ. ՑԻՇԵՑԷՔ։

Ծանոթ. *Երրորդ խաչքարի վրա արձանագրություն չկա, ինչպես նաև մյուս երկու տապանաքարերի վրա, որոնք խաչքարերի դիմացն են։*

1172. *ԽԱՉՔԱՐ, ընկած է գերեզմանատան հյուսիսային մասում, քիվին 1 տող.*

ԽԱՉՍՇԱՔԱՐԺԻԺՔԻՆ — ԽԱՉՍ ՇԱՔԱՐ ԺԻԺՔԻՆ:

1173. *ԽԱՉՔԱՐ, կանգնած է նախորգի մոտ, քիվին 1 տող.*

ԵՄԱՐԿՈՍԿԱՆԳԻԽՉԱԳՈՋՐԻՆ — ԵՍ ՄԱՐԿՈՍ ԿԱՆԳ(Ն)ԵՑԻ Խ(Ա)ՉՍ ԱՐԳՈՋԱՐԻՆ:

Ծանոթ. *ԱՐԳՈՋԱՐ անունը կասկածելի է. համեմատիր գծագրությունը:*

1174. *ԽԱՉՔԱՐԵՐ, երկու հատ, կանգնած են գերեզմանատան հյուսիսային մասում, իրար կից.*
*Ա. ՔԻՎԻՆ 1 տող.*

ԽՈՃԱՉԻՉՍԿՆԿԵՑԻԽՉՍՄԱՐԻՄԽԱԹ — ԽՈՃԱՉԻՉՍ ԿԱՆԳՆԵՑԻ Խ(Ա)ՉՍ ՄԱՒՐ ԻՄ ԽԱԹ(Ո)ՒՆԻՆ:

Լուսանկ. 240

1175. *Բ. ՔԻՎԻՆ 1 տող.*

ՍԲԽՉՍԲՐԷԽԱՒՍՈՍԱՓԻՐՆ — ՍԲ. Խ(Ա)ՉՍ ԲԱՐԷԽԱՒՍ ՈՍՏԱՓԻՐԻՆ:

Լուսանկ. 241.

1176. *ԽԱՉՔԱՐ, կանգնած է ս. ածածնի հարավում, քիվին 1 տող.*

ԵՍՍԱՀԱԿՍԿԱՆԿՍԱՀՅՈՒՅԻԽՀՈ — ԵՍ ՍԱՀԱԿՍ ԿԱՆԿՆԵՑՈՒՑԻ Խ(Ա)Չ(Ս) ՀՈԳՈՑ:

1177. *ԽԱՉՔԱՐ, կանգնած է ս. ածածնի հարավում, քիվին 1 տող.*

ԵՍԹԷՄԷՍԿԱՆԻԽՍՏԱՍՏԻՆ — ԵՍ ԹԷՄԷՍ ԿԱՆ(Կ)ՆԵՑ(Ի) Խ(Ա)Չ(Ս) ՏԱՍՏԻՆ:

Ծանոթ. *ՏԱՍՏԻՆ անունը կարելի է այլ կերպ ևս վերծանել. համեմատիր գծագրությունը:*

1178. *ԽԱՉՔԱՐԵՐ երեք հատ, գտնվում են ս. ածածնի արևելքում, կիսովին խրված գետնի մեջ, իրար կից.*
*Ա. ՀԱՐԱՎԱՑԻՆԻ ՔԻՎԻՆ 1 տող.*

ԵՏՐԱՒԱՆԷՍԿՆԿՑԻԽՉԱՍՏՈՒԱԾՈՒՔՀ — ԵՍ ՏՐ ԱՒԱՆԷՍ Կ(Ա)ՆԿ(Ն)ԵՑԻ Խ(Ա)ՉՍ Ա(Ս)ՏՈՒԱԾԱՏՈՒՐ ՔԱՀԱՆԱՑԻՆ:

1179. *Բ. ՄԻՋԻՆԻ ՔԻՎԻՆ 1 տող.*

ՍԲԽԱԲՍԻՍՏՐԱՒԱՆԷՍ — ՍԲ. ԽԱ(Չ)Ս ԲԱՐԷԽ(Ա)ՒՍ ՏՐ. ԱՒԱՆԷՍ(Ի)Ն:

1180. *Գ. ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆԻ ԽԱՉԻ ԹԵՎԵՐԻ ԱՐԱՆՔՈՒՄ*

ԽՉՍԻ — ԽՉՍ . . . .

*1181. ՏԱՊԱՆԱՔԱՐ, արևմտյան ճակատին 4 տող.*

ԱՅՍԷ
ՀԱՆԳ
ԻՍՄՌՒ
ՌԲԿԻՆ

ԱՅՍ Է| ՀԱՆԳ|ԻՍՏ ՌՒՎ|ՌՒԲԷԿԻՆ:

Լուսաեկ. 242

*1182. ՏԱՊԱՆԱՔԱՐ, փոքր, օրորոցաձև, կողին թամքած ձի, ղավ և ըլխթ-ներ. թագազարդ մարդ, ձեռքին ոընդանման իր. ստորին մասում 3 տող.*

ԱՅՍԷ
ՀԱՆԳԻՍՄՌՄ
ՌԹԿԻՆ

ԱՅՍ Է| ՀԱՆԳԻՍՏ ՌԱՄ|ՌՒԹԿԻՆ:

*1183. ՏԱՊԱՆԱՔԱՐ, մեծ, օրորոցաձև, հարավային կողին թամքած ձի, ղավ բռնած կին, կերակրաման, ըլխթ և խորոված՝ շամփուրի վրա. ստորին մասում 1 տող.*

ՄԻԽՋՍԲՌԷԽԱՍՄՌԳՄՌՏԻՆ

ՄԲ Խ˻Ա˼ՋՍ ԲԱՐԷԽԱԻՍ ՄԱՐԳԱՐՏԻՆ:

*1184. ՏԱՊԱՆԱՔԱՐ, կողին ձեռքերը կրծքին խաչած թագով մարդ, ձախ կողքին մկրատ, ցրցամ տալու և քերելու գործիքներ, աջ կողքին շամ-փուրով խորոված, կերակրամաններ, ըլխթներ և ղավ, ապա անթամք ձի՝ ոտների տակին վիշապ. սանձից բռնել է մի պատանի. վերևի մասում 2 տող.*

ԱՅՍԷՀԱՆԳԻՍՄ
ՄԵՐՀԱՊԻՆ

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ| ՄԵՐՀԱՊԻՆ:

*1185. ԽԱՉՔԱՐ, փոքրիկ, տակին 2 տող.*

ՄԽԻԹՄՍԿԿԵՑԻ
ԽՉՍՓԱՇԱԶՆ

ՄԽԻԹԱՐՍ Կ˻Ա˼ՆԿ˻Ն˼ԵՑԻ|
Խ˻Ա˼ՉՍ ՓԱՇ˻Ա˼ ԱԶ˻ԻԶԻՆ˼:

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆ

*1186. ՏԱՊԱՆԱՔԱՐ, մեծ, տափակ, երեսին 7 տող.*

ԹՉՋԱՅՍԷ
ՀԱՆԳԻՍՄ
ՅՈՀԱՆԻՍ
ԻԴՐԱՆԵՐԷ
ՑՈՑՋԱԼԱԼ
ԻՆԱԾՈՂՈ
ՐՄԻՍՄԱՅ

ԹՎ. :ՉԶ: (1257) |ԱՅՍ Է| ՀԱՆԳԻՍՏ|
ՅՈՀԱՆԻՍ|Ի, ԴՐԱՆ ԵՐԵ|ՑՈՑ ՋԱԼԱԼ|ԻՆ.
ԱԾ ՈՂՈ|ՐՄԻ ՍՄԱՅ:

*Հրատ. Լալայան, XVIII, 146. Սմբատյանց, 535*

**1187.** *ԽԱՉՔԱՐ, կանգնած է կիսավեր մատուռի մոտ. ընկին. ճակատին և խորանի շուրջը 7 տող.*



ՙԻ՚ ԹՎ. ։ՉԾԶ։ 1307 ԿԱՆԿՆԵՑԱՒ| ՄԲ ԽԱՉՍ ՅՈ|Վ.ԱՆԻՍԻ ՀԻԻՍԱՆ.|
ՈՐՔ ԵՐԿԻՐ ՊԱԳԱՆԵՔ ԱՍԱ|ՑՙԼ՚Ք ԱԾ։ ՈՂ.ՈՐ|ՄԻ ՅՈՎ.ԱՆԻՍ,Ի,։

*Հրատ. Հալայան, XVIII, 146ւ*
*Լուսանկ. 243*

**1188.** *ԽԱՉՔԱՐԵՐ, երկու հատ, կանգնած մի պատվանդանի վրա, գտնվում են գերեզմանատան արևելյան եզրին.*

*Ա. ՀՑՈՒՄԻՍԱՑԻՆԻ ՔԻՎԻՆ, խորանի շուրջը և հյուսիսային կողին 3 տող.*



ՄԲ. Խ,Ա,ՉՍ ԲԱՐԷԽԱԻՍ ԳՐԻԳՈՐ
ԱՂ.ԻՆ.| ԹՎ. ։ՌԼ.։ (1581)։
ԵՍ ՔԻՐԱՄՍ Խ,Ա,ՉՍ ԿԱԶՄԵՑԻ։

**1189.** *Բ. ՀԱՐԱՎԱՑԻՆԻ ՔԻՎԻՆ և խորանի շուրջը 2 տող.*



ՄԲ Խ,Ա,ՉՍ ԲԱՐԷԽԱ,Ի,Ս ԽԱՆՈՒՄ
ԱՂ.ԻՆ| ԹՎ ։ՌԼ.։ (1581)։

*Հրատ. Սմբատյանց, 531—532ւ Հալայան, XVIII, 145 (Երկուսի մոտ էլ Թվականները սխալ են և ԽԱՆՈՒՄ ԱՂԱ-ն ԽԱՉՈՒՄ ԱՂԱ է վերծանված)ւ*

*1190. ՏԱՊԱՆԱՔԱՐ, մանկական, արևելյան ճակատին 6 տող.*

ԱՅՍԷՀԱ
ՆԳԻՍ
ՏՏԱՐ
ԱՅԽԱ
ՆԻՆ
ԹՎՌԼ

ԱՅՍ Է ՀԱ|ՆԳԻՍ|Տ ՏԱՐ|ԱՑԽԱ|ՆԻՆ|.
ԹՎ. ՌԼ: (1581):

*1191. ՏԱՊԱՆԱՔԱՐ, մեծ, օրորոցաձև, հյուսիսային կողին կենցաղային տեսարան, կից է նախորդին արևմուտքից. վրան 4 տող.*

ՍԲԽԱՆՍԲՐԷԽՕՍԴՕՐԱՑԳԽԱՆԻՆ
ԳՐՆՆ✻ԱՆՍՏՈՒԻԿԱԶՄԻԼ
ՔԼՏԱՂԷՑ
ԵՍԱՎԱՆԷՍԿԱՎՄԷՑԻ

ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽՕՍ ԴՕՐԱՑԳԽԱՆԻՆ.
ԳԱՐՈՆ ՆԱՆՍ ՏՈՒԻ ԿԱԶՄԻԼ:|
ՔԼՏԱՂԷՑԼԻ, |ԵՍ ԱՎԱՆԷՍ ԿԱԶՄԵՑԻ:

Ծանոթ. Պատկանում է նույն տոհմին՝ նախորդի հետ, և ժամանակով մոտ։ Քլտաղեցի տեղանունը թերևս Քշտաղցի ծանոթ գյուղն է։

*1192. ԽԱՉՔԱՐ, մեծ և գեղաքանդակ, գտնվում է դերեզմանատան արևելյան մասում. քիվին 1 տող.*

ՍԲԽԱՉՍԲԱՐԷԽԱՆԱԶԱՐԻՆԹՎՌԷ

ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱԻՍ ՆԱԶԱՐԻՆ.
ԹՎ. ՌԻԷ:| (1578):

*1193. ԽԱՉՔԱՐ, գեղաքանդակ, նախորդի մոտ. քիվին 2 տող.*

ՍԲԽԱՉՍԲԱՐԷԽԱԻՍԱՅՏԻՆԻ
ԹՌ ✝ ԽԲ

ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱԻՍ ԱՑՏԻՆԻ.|
ԹՎ. ՌԽԲ: (1593):

*1194. ԽԱՉՔԱՐ, ընկած և կոտրված, քիվի բեկորների վրա, խորանի շուրջը և հարավային կողին 3 տող.*

ՍԲԽՉՍԲՐԽՍԲՐՍ··ՔՀՅԻՆ

ԹՎ Ռ ՃԶ

ԵՍԱՎԱ…ՆԷՍԿԱԶՄԵՑԻ

ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱԻՍ ԲԱՐՍԵՂ ԳԱՀԱՆԱՅՑԻՆ.| ԹՎ. ՌՃԶ: (1657):
ԵՍ ԱՎԱՆԷՍ ԿԱԶՄԵՑԻ:

Հրատ. Սմբատյանց, 532։ Լալայան, XVIII, 145։

*1195. ԽԱՉՔԱՐԵՐ, երկու հատ. մեծ և՞ շատ գեղաքանդակ, ընկած են գերեզմանատան արևելյան մասում, իրար մոտ.*

*Ա. ՔԻՎԻՆ, ՃԱԿԱՏԻՆ, ԽՈՐԱՆԻ ՇՈՒՐՋԸ և հյուսիսային կողին՝ վերից վար 5 տող.*



ՍԲ. ՆՇԱՆՍ ՄԱՐԿՈՍԻՆ ԱԻԳՆԱԿԱՆ.| ԹՎ. :ՌՅԿԲ: (1613):| ՄԵԼԻՔՍԷԹ Կ[Ա]ԶՄՈՂ.| ԵՍ ՄԱՐԿՈՍՍ, ԵՍ ՄԱԹՈՍ Կ[Ա]ՆԿ[ՆԵ]ՑԻ ԽԱՉՍ ՅԻՇԱՏԱԿ ՄԵՐ ԵՒ ԾՆՈՂԱՑ| ՄԵՐՈՑ. ՈՎ ԿԱՐԴԱՑ ԱԾ ՈՂՈՐՄԻ ԱՍԷ:

*Հրատ. Սմբատյանց, 581։*
**Լուսանկ. 244**

*1196. Բ. ՔԻՎԻՆ ԵՎ ՍՏՈՐԻՆ ՄԱՍՈՒՄ 5 տող.*



ԵՍ ՄԱՐԿՈՍ ԿԱՆԿՆԵՑԻ ԽԱՉՍ ՓՐԿՈՒԹ[ԵԱՆ]| ՀՈԳՈՅՆ ՀԱՒՐՆ ԻՄ|ՈՅ ԹՈՒՄԻՆ, ԱԹ|ԱՅՄԻՆ. ԹՎ. :ՌԿԲ: (1613):

Ծանոթ. *Երկու խաչքարերն էլ Մելիքսեթ կազմողի ձեռագործն են։ Կազմողը թվականի միայն տասնավորն ու միավորն է պարզ գրել, իսկ հազարավորը համարել ԹՎ բառի հետ միացած (ան'ս գծագիրը)։ Հրատարակիչներն այդ չհասկանալով, նշանակել են 613 թվականը. Նախ որ խաչքարերի քանդակների ոճը միանգամայն անհարիր է VII դարին և ապա՝ Մելիքսեթ կազմողը հայտնի է իր արիշ գործերով՝ մեր նշանակած թվականներին։*

*Հրատ. Սմբատյանց, 581։ Լալայան, XVIII, 145—146։*
**Լուսանկ. 245** *(միայն ստորին մասին)*

*1197. ՏԱՊԱՆԱՔԱՐ, տափակ, նախորդների մոտ, երեսին 5 տող.*

:ԱՅՍԷՀ:
:ԱԳԻՍՄՀՐ:
ՈՆԻՆՈՐԴ:
ՍՀԱԿԻՆ
ԹՎՌՃԿ

ԱՅՍ Է Հ|ԱՆԳԻՍՏ ՀՐ|ՈՆԻՆ, ՈՐԴԻ| ՍՀԱԿԻՆ.|
ԹՎ. :ՌՃԿ: (1711):

ԳՑՈՒՂԱՄԻՋՈՒՄ ԵՎ ՇՐՋԱԿԱՅՔՈՒՄ

*1198. ԽԱՉՔԱՐ, մեծ, X դարի բնորոշ քանդակներով, կանգնած է գյուղամիջի հին և փոքր գերեզմանատան մեջ, Թիկունքին մեծ և երեսանց գրված տառերով, որից մնացել է հետևյալը. ԻՆԱ։*

Ծանոթ. *Թերևս առաջին տողում թիվը լինի Ի ։ՆԱ։(952)։*

*1199. ԽԱՉՔԱՐ, շինված է հասարակ սալքարից, անզարդ, ընկած է գյուղամիջում, գետի ձախ ափին, երկաթե կամուրջի մոտ. Թևերի արանքներում 5 տող.*

ԻՆՍ
ԻՐԷՑ
ՆՈՅ+
ԱՄԵՅԷ
ԱՐԵ

ԹՎ:Ռ:Հ:Ա:
ԵՍՈՀԱՆԷ
ԻԽԱՇՍԱ
ԲԱՐԿՈ Ղ
ԻՆՈՐԱՅՏ

...........
Ս.........
ՄՌ........
ԱՏ.......
ՒՍՄԵՌ....

ԹՎ. :ՈՀԱ: (1222) . . . .
ԵՍ ՈՀԱՆԷՍ ԿԱՆԿՆԵՑ-
Ի ԽԱՉՍ ԱՄՈՒԻՍՆՈ ԻՄՈ
ԲԱՐԿՈՇԱՏԻՆ . . . . . .
. . . . . . . . . . . . .

*1200. ԽԱՉՔԱՐ, մեծ և գեղաքանդակ, կանգնած է գյուղամիջում, արևմըտյան կողմի բարձր լանջի մեծ ժայռաբեկորի վրա, քիվին և տակին 2 տող.*

ԻԹՎՉԽԴԿԱՆԳՆ,ԵՑԱԻԽԱՉՍ



ԻԲԱՐԵԽԱԻՍՈՒԹԳՐԻԳՈՐՈՅ

Ի ԹՎ. :ՉԽԴ: (1295). ԿԱՆԳՆԵՑԱԻ
ԽԱՉՍ| Ի ԲԱՐԵԽԱԻՍՈՒԹԻ ԳՐԻԳՈՐՈՑ

*Հրատ. Սմբատյանց 531 (սխալմամբ կրկնված նաև էջ 532)։ Ղալայան, XVIII, 144։ Ալիշան, 57։*

*1201. ՏԱՊԱՆԱՔԱՐ, մեծ և տափակ, գտնվում է Վերին և Ներքին Գետաշեն գյուղերի արանքում ընկած Իշխանագյուղ կոչվող գյուղատեղու հարավային ծայրին կանգնած Իշխանավանք մատուռի մեջ։ Երեսին քանդակված է ննջեցյալը, երկար զգեստներով և գնդաձևարդ գոտիով. աջ ձեռքին դաշույն՝ շեղբը դեպի վեր. ձախով բռնել է գոտու մեջ խրած դաշույնի կոթը. ոտների տակին 4 տող.*

ԱԱՍԷՀԱ
ՆԳԻՍՄԷ
ՊԱՐՈՆԱՐ
ՂՈԹԻՆԱ

ԱՑՍ Է ՀԱ|ՆԳԻՍՏ Է|
ՊԱՐՈՆ ԱՐ|ՂՈԹԻՆԱ։

ՆԵՐՔԻՆ ԴԵՏԱՇԵՆ ԳՅՈՒՂԱՄԻՋՈՒՄ ԵՎ ՇՐՋԱԿԱՅՔՈՒՄ ՆԱԽԿԻՆՈՒՄ
ԵՂԱԾ ԵՎ ԱՅԺՄ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՑՈՂ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*1202. ԽԱՉՔԱՐ, ագուցված է եղել գյուղամիջի ս. Լուսավորիչ անունով եկեղեցու մուտքին.*

Ի Արհիեպիսկոպոսութեան Տեառն...նակի, Սուքեաց, ես Ովհաննէս քահանայս կանգնեցի զսուրբ խաչս ի փրկութիւն հոգւոյ իմոյ . . .

*Հրատ. Սմբատյանց, 533։ Լալայան, XVIII, 146։*

*1203. ԽԱՉՔԱՐ, կանգնած է եղել ս. Աստվածածնի հյուսիսում. վրան՝*

Սբ խաչս բարեխաւս Ղուկասին և Պողոսի որդի Ծատուրին: Տէր Աստուած:

*Հրատ. Սմբատյանց, 531։*

*1204. ԽԱՉՔԱՐ, գտնվելիս է եղել Նախորդի մոտ. վրան՝*

Սբ խաչս բարեխաւս Մելիք Խանին. թվ. ՌՃ: (1651):

*Հրատ. Սմբատյանց, 531։*

*1205. ԽԱՉՔԱՐ, կանգնած է եղել ս. Աստվածածնի մուտքի մոտ. վրան՝*

Ես Շաղաբասս սբ խաչս կանգնեցի դստեր իմոյ Խուանդ աղին. թվ. ՋՀԷ: (1528):

*Հրատ. Սմբատյանց, 532։ Լալայան, XVIII, 145։*

*1206. ԽԱՉՔԱՐ, ագուցված գյուղամիջի ս. Լուսավորիչ եկեղեցու պատին, վրան՝*

Խաչս բարեխաւս Աւագին. սբ խաչս բարեխաւս Սիրայմարգին:

*Հրատ. Սմբատյանց, 532։*

*1207. ՏԱՊԱՆԱՔԱՐ, փոքր, օրորոցաձև, գտնվելիս է եղել Իշխանագյուղի ավերակների մեջ. մի կողին նստած մարդ, մոտը մուրճ, գավ և հաց. շրջանակին՝*

Սբ. խաչս բարեխաւս Մկրտչին. թվ. ՌԽԲ: (1593): Քիրամ կազմող:

*Հրատ. Լալայան, XVIII, 147։*

*1208. ՏԱՊԱՆԱՔԱՐ, գտնվելիս է եղել Իշխանագյուղի ավերակների մեջ. վրան՝*

Այս է հանգիստ Շիրինին. թվ. ՌՃԻ: (1671):

*Հրատ. Սմբատյանց, 527[1]։*

---

[1] *Ալիշանն ու Սմբատյանցը առնելով «Մասեաց աղավնի» ամսագրից, այս գյուղից հրատարակել են երեք արձանագրություն ևս՝ 1517, 1524 և 1657 թվականների, որոնց մեջ իբր հիշատակված է* Կնիք *անունով քաղաք։ Հրատարակիչներն իրավացիորեն կասկածել են այդ վերծանության ստուգաբանության վրա։ Դժվար չէ կռահել, որ* կնիք *բառը սխալ վերծանությունն է արձանագրություններում հաճախ գործածված* կանգնեցի *ձևի, որը* կանգնեցի *բայի սղված գրությունն է։* Կնիք *անունով քաղաք երբեք գոյություն չի ունեցել։ Բացի այդ՝ հիշյալ արձանագրությունները գտնվում են մեր ժողովածուի մեջ՝ ստույգ վերծանմամբ։ Այսպես, դրանցից առաջինը № 1120 և երկրորդը № 1121-ն է, (Համեմատիր* Ալիշան, *Սիսական, էջ 57։* Սմբատյանց, *«Գեղարքունիք», էջ 529։* Լալայան, *Ազգ. հանդ.,* XVIII, *145 ծանոթությունը)։*